ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» «փետրվար» 2025թ. ՆՄՈ/ Ա 242-

ք. Արմավիր

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 177-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ ՀՀԱՄԷԱՃԾՁԲ-25/03 պայմանագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի ծառայության 2025 թվականի տարեկան ծրագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացնել աուդիտորական առաջադրանքներ՝ համաձայն N1 հավելվածի:
2. Աուդիտորական առաջադրանքների իրականացումը պատվիրակել «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ձևավորված աշխատանքային խմբին՝ համաձայն N2 հավելվածի:
3. Աուդիտորական առաջադրանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների և կազմակերպությունների ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, օրենքների, այլ իրավական ակտերի և այլ պայմանների համապատասխանության վերաբերյալ հավաստիացում տրամադրելու նպատակով:
4. Աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարներին՝ աուդիտորական առաջադրանքների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով աջակցել աուդիտորական խմբի անդամներին, տրամադրել պահանջվող փաստաթղթերը, դրանց պատճենները, ներկայացնել տեղեկանքներ, պարզաբանումներ և բացատրություններ:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

5. Աուդիտորական առաջադրանքի ընթացքում թույլատրել աուդիտորական խմբի անդամներին օգտվել էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված փաստաթղթերից և նյութերից:

6. Աուդիտորական առաջադրանքների կատարման ընթացքում աշխատանքների պատշաճ կազմակերպումն ապահովելու և այդ ուղղությամբ համակարգման լիազորությունները վերապահել (աուդիտի որակավորմամբ) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Արայիկ Հակոբյանին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 14 -ի
ՄՈ242-Ա-2025 որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների
2025 թվականի տարեկան ծրագիրը

2025 թվական		
N	**Աուդիտի ենթակա միավորի անվանումը**	**Աուդիտի տեսակը**
1	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
2	«Ալաշկերտի Հ.Քոչարի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
3	«Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
4	«Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
5	«Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համապատասխանության
6	«Արմավիրի N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
7	«Արմավիրի Մ.Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
8	«Մեծամորի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
9	«Բերքաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
10	«Շենավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
11	«Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
12	«Նալբանդյանի Պերճուհի և Արմէն Նալպանտեանների անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
13	« Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
14	«Սարդարապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
15	«Դաշտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
16	«Բաղրամյանի /Էջմ./ միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
17	« Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
18	«Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան N 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
19	«Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4 հիմնական դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման

20	«Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
21	«Վաղարշապատի Վահան Ռշտունու անվան N 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
22	« Վաղարշապատի «Ներսիսյան» N 6 հիմնական դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
23	« Արշալույսի Ս. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
24	« Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
25	« Գրիբոյեդովի Վ. Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
26	«Գայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
27	«Ծիածանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
28	«Խորոնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
29	«Տալվորիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	Համակարգի գնահատման
30	Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան«Արմավիրի ԲԿ» ՓԲԸ	Համակարգի գնահատման
31	«Էջմիածնի ԲԿ» ՓԲԸ	Համակարգի գնահատման
32	«Մեծամորի ԲԿ» ՓԲԸ	Համակարգի գնահատման
33	« Քեվորք և Անիթա Փակումեանների հիշատակի « Հիսուսի Մանուկներ» ԱԿ ՓԲԸ	Համակարգի գնահատման
34	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Համապատասխանության
35	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Համապատասխանության

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 14.02.2025 10:34:41 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի փետրվարի 14 -ի
ՄՈ/242 -Ա որոշման

Աշխատանքային խումբ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ ՀՀԱՄԷԱՃԾՁԲ-25/03 պայմանագրով ստանձնած պարտավորությունները և աուդիտորական առաջադրանքները կատարելու նպատակով ստեղծված

Կազմը՝

1. Վիգեն Խաչատրյան	աշխատանքային խմբի ղեկավար
2. Արտակ Թորոսյան	աուդիտ
3. Քնարիկ Սաֆարյան	աուդիտ
4. Գառնիկ Հովհաննիսյան	աուդիտ

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

14.02.2025

VERIFIED OCSP 14.02.2025 10:33:31 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023